ԿԱԹԻԴ ՓԱՐԱՆ ՀՄՈՒՆԱՍ, ՄԱՄԱ

Կեսօրվան մոտ է:

Նպարավաճառին խանութը մեծ բազմություն կա:

Այգեպաններ, բանվորներ, անոնց կիներ՝ իրենց հղանցքին փակած քանի մը լաներով, եկեր են գնումներ ընելու:

Ժամանակը կարճ է: Կանապարեն ամենքն ալ:

Պետք է շուտով վերադառնան այգեստան: Շատ գործ կա:

Կուրի օրեր են: Խաղողն հասեր է և ծիածանին բոլոր գույներն իր վրան առեր: Այնքա՜ն քաղցր, այնքա՜ն հրապուրիչ:

Նպարավաճառը միջին տարիքով, լեցուն, ածիլված երեսներով բավամազ հայ մըն է, մաքուր վրանոց հագեր է և մեծդի մարմինը կշարժե հոս հոն դանդաղաքայլ շուքով: Մեկին հացը կուտա, մեկալին խմելիքը: Հազիվ կրնա ետեւ ետեւ հասնող հաճախորդներուն ծրարները լեց-

նել, անոնց գիները հաշվել, ապա դրամներն ստանալ և սովորական բառով մը համփու դնել:

Այսպես, մեկ, երկու ժամեր կանցնին:

Բազմությունը հետզհետե կսկսի պակսիլ: Խանութը կրկին կգտնե իր սովորական խաղաղությունը:

Նույն պահուն Եսեի փոքրիկ դուռը կբացվի մեղմությամբ և ծերունի կին մը ներս կդնե իր ոտքերը՝ հայտնապես սխալ տեղ մը մտած ընլլալու վախով լեցված:

Հոր և կծկտած պառավ մըն է, մորքի և ոսկորներու տխեղծ և եղկելի զանգված մը: Կզարմանաս, որ ան տակավին կշնչե և տակավին կրնա շարժիլ: Իր գնացքը այնքան դանդաղ է ու լուռ, որ մարդ ակամա շուքի մը հետ շփոթելու մտածումը կունենա:

Մաման երկու քայլ առնելե ետք կկենա և շունչ մը կառնե: Չի համարձակիր առաջ անցնիլ:

— Այս խեղճ կինը ինչ կուզե,— կհարցնեմ նպարավաճառին և կփութամ պառավին մոտ, անոր կարելի օգնություն մը տալու մտածումով:

— Մայրս է,— կպատասխանե խանութպանը ցուրտ անտարբերությամբ և առանց անոր երեսը նայելու: Ապա կավելցնե,— խանութիս ետեր տախտակե խուց մը շինած ենք, հոն կրնակի: Մեր տան մեջ տեղ չունինք, նոր շինած ենք և չենք ուզեր, որ աղտոտի: Կեսօրին կամ իրիկվան դեմ կուգա իրեն պետք եղած բաները առնելու:

Անոր այս շոր բառերուն մեջ կըմբռնեմ ամբողջ պատմություն մը, սրտաճույզ և եղերական: Ապա ժպտերես կմոտենամ լքված ծերունիին և կխոսիմ տաք շունչով:

— Բարև՛, Մամա՛, ի՞նչպես ես, աղե՞կ ես:

Պառավը կնայի ինձի նախ ապշությամբ և զարմանքով: Իրեն ալ «բարև» տվող կա աշխարհի վրա: Հետո կուշաբերի, ինքն ալ թերև ժպիտ մը կփորձե անհամար փոքրերով ծածկված դեմքին վրան և կըսե:

— Է՜հ... ինչ ըսիմ, ձագուկս, տերտս... հո՛ս է... հո՛ս,— ու ձեռքը կտանի կուրծքին:— Հոն դիզված կրակներ ըլլալու են...

— Աղեկ կըլլաս, Մամա, հույսդ մի՛ կտրեր, աստված մեծ է:

— Շատ շնորհակալ եմ, տղաս, աստված արևիկդ պահե, «ա՜խ» ըսել չտա:— Ու տակավին կխակե բարի խոսքերուն և օրհնության շարքը, հինավուրց եկեղեցիի մը քաղցր մեղեդիներուն նման:

Հետո հավկիթի սնտուկին կմոտենա և թուղթե տոպրակին մեջ կդրնե քանի մը հատ հավկիթ զգուշավոր և հատիկ-հատիկ, մեծ ծանրություն մը վերցուցած ըլլալու հոգնածությամբ: Հաց մըն ալ կառնե վախով, ծանր քայլերով կմոտենա ցուցասնդուկին և կարագի բրդոն մը

կփարքէ բաղքի կտորի մը մէջ, փոքրիկ շիշ մըն ալ կար կվերցնէ և կմոտենա իր տղուն, անոր աչքերուն կնայի աղաչավոր և բարի նայվածք մը ձգելէն:

Վայրկյան մը լռություն կտիրէ:

Անանուն հուզում մը կպատէ ամբողջ էությունս:

Տարօրինակ, անբացատրելի տեսարան մըն է այս: Աչքերս մոր ու զավակին վրա գամվեր են և չեն ուզեր շեշտ մը, շարժում մը կորսնցնել անոնցմե:

Տղան ձայն չի տար, դուրս կնայի սիկարեթի լեցուն մուխ մը պարպելով օդին մէջ:

Մերունի կինը հին և գունաթափ զգեստին գրպանէն փոքրիկ, ճըմրթկված դրամապանակ մը կհանէ, երկու ձեռքով կբանա զայն և 50 սենթ կդնէ սեղանին վրա դողահար...

— Էտի ֆի՜չ է, ֆիչ...— կպոռա նպարավաճառը խստությամբ:— Կա՛թ, հավկի՛թ, կարա՛գ, հա՛ց... հիսուն սե՞նթ կընէ:

Մաման հայտնապես գին, գումար, հաշիվ չի գիտեր: Կսպասէ, որ զավակը հաշվէ: Կնայի դրամապանակին մէջ ուշի ուշով, 25 սենթ ալ կհանէ և կդնէ նույն սեղանին վրա անխոս:

— Էտ ըլ ֆիչ է: Էս չափ ատեն կուզաս բան կառնես, գիները դեռ չսորվեցա՞ր, ցնդա՛ծ:

Մաման խորունկ և սպաննիչ ցնցում մը կստանա և կայլայլի...

Ի՞նչ լավ էր, երբ երկարէ մուրճ մը իջած ըլլար իր գլխուն այդ խոսքերու տեղ:

Այս անգամ գրպաններուն կտանի իր ձեռքը, որ երկար ատեն արևին տակ ձգված փայտի կտորի մը կերպարանքն է առեր, երկու հինգ սենթնոց ալ կգտնէ և կուտա իր տղուն:

— Քանի մը սենթ ավելի կընէ... բայց ինչ որ է, մյուս անգամին կհաշվեմ:

Մաման լալագին դիմագծով կհավաքէ իր փոքրիկ ծրարները առանց բառ մը արտասանելու: Կուրծքին և թևերուն մէջ կտեղավորէ զանոնք զգուշությամբ և կքալէ դեպի եաևի դուռը դանդաղ և մտածկոտ քայլերով:

Ես անմիջապես կվազեմ անոր ետևէն, դուռը կբանամ և կօգնեմ, որ դժվարություն մը չունենա կամ ծրարները գետին չձգէ:

Մաման գլուխը կշարժէ ու կժպտի ինծի շնորհակալությամբ:

Լացի՞ թէ ուրախության ժպիտ:

Դժվար է ըսել:

Ես կվերադառնամ հուզումնալից սրտով: Աչքերս լեցուն և պղտորած:

— Մա՞յրդ է ըսիր այս ծերունին,— կհարցնեմ նկարավաճառին:

— Այո՛,— կպատասխանե մարդը ցուրտ ու կտրուկ:

— Իր ապրուստի պետքերուն համար վճարո՞ւմ կընե քեզի:

— Հարկա՛վ: Ինչո՞ւ պիտի չընե: Ես այս բաները ծրի՞ կտանեմ:

Պահ մը կապշիմ ու կմտածեմ: Թերևս գանձ մը, հարստություն մը ունի այս մամիկը: Ու խանութպանին դարձած՝

— Դրամ, եկամուտ ունի՞ մայրդ:

— Ոչ՛, ամերիկյան օգնության դրասենյակը կուտա ամսական քանի մը դոլլար: Երբ ժամանակին խելք ունենար և քաղաքացի ըլլար, հիմա ատոր կրկնապատիկը կրնար առնել: Ի՞նչ ընենք, պիտի տանինք...

Ապա քիչ մը կկենա և ինքզինքը արդարացնելու փորձով կավելացնե.

— Մենք ընտանիքի, զավակներու տեր ենք, ըսինք կառավարության, ծախքերնիս շատ է ըսինք, այս պառավին հոգ չենք կրնար տանիլ ըսինք, երկար բարակ աշխատեցանք, մարդ մեջ ձգեցինք և վերջապես հաջողեցանք ամսական պզտիկ գումար մը ապահովել... ալ ինչո՞ւ ծրի ապրանք պիտի տամ... ո՞վ ծրի կուտա որ...

Ես սառած կմնամ: Նկարավաճառը կբանա իր մտքին պաշարը և կխոսի այնպես, ինչպես մարդիկ կխոսին շատ սովորական, շատ պարզ ու բնական նյութի մը վրան, օրվան օդին կամ եղանակին շուրջ:

Իմ բառերը կչորնան կոկորդիս մեջ:

Համր կդառնամ ալ, կատարելապես համր... ու կքալեմ աջ ու ձախ փոթորկած...

Ապա խորունկ ու անդիմադրելի փափագ մը կզգամ վազելու մամային ետևեն, կրկին խանութ բերելու համար զայն, անոր չորցած ձեռքերն առնելու իմ ձեռքերուս մեջ, համբուրելու զանոնք և խոսելու այսպես.

— Մամա՛, անուշի՛կ և անտեր Մամա, մյուս անգամ, երբ քու հարազատ զավակեդ կար գնելու գաս, քո՛ւ կարիդ փարան չմոռնաս... ըսե այս զալըմ տղուդ, որ քու տված կարիդ փարան վճարե նախ... այն մայրական անարատ կարին, որ քու էութենեդ, քու արյունեդ կարիդներեն քամվեցավ և վազեց անոր շրթունքներուն մեջ... վազեց անհամա՜ր գիշերներով... անքո՜ւն գիշերներով... նվաղուն օրորներով և նենանիներով քաղցրացած...

Մամա՛, միտքդ պահե՛, մյուս անգամ խանութ գալուդ՝ կարիդ փարան չմոռնաս... հա՞, չմոռնաս: